

ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

«ԱՆՁԻՆՔ»ՆԵՐԸ ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐ ՔՆԱՐԵՐԳՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հայ հոգեւոր ֆնարերգութիւնը սկզբնաւորուել է Տրդ դարում՝ հայ դպրութեան եւ գրի հիմնադիրներ Ս. Սահակի եւ Ս. Մաշտոցի հեղինակութեամբ։ Այն անցել է զարգացման հետաքրքիր ուղի եւ շարունակուել մինչեւ 15րդ դար։ Հազար տարուայ ընթացքում յօրինուել եւ կանոնականացուել են շուրջ 2000 հոգեւոր երգեր, որոնք միաժամանակ հանդիսանում են մեր գրաւոր դասական քանաստեղծութիւնը։ 5-15րդ դարերում դրանք յղուել, զարգացել ու հարստացել են եւ, պահպանելով մեր լեզուի դասական աւանդները, քիւրեղային մաքրութեամբ հասել մեզ։

Այստեղ ցանկանում ենք բանասիրական, նաեւ ծիսական կարեւորութիւն ունեցող մի քանի հարցեր ներկայացնել, որոնք աւելի ճիշտ են քննդրում մեր հոգեւոր ֆնարերգութեան առանձնատկութիւնները, նրա գործածութեան կարգը, այդ թւում նաեւ՝ «Անձինք»ների տեղը մեր Շարակնոցում եւ տօնակարգում։

Հինգերորդ դարի մեր հոգեւոր ֆնարերգութեան մասին արժէքաւոր վկայութիւններ են պահպանուել Կորիւնի, Եղիշէի եւ Ղազար Փարպեցու երկերում։

«Անդ էր այնուհետեւ չարքենայ գինով, այլ առաւելուլ հոգւով եւ պատրաստել զսիրտս երգովք հոգեւորօք ի փառս եւ ի գովութիւն Աստուծոյ...» (Կորիւն, ԻԲ)։

Հայ Եկեղեցին Տրդ դարում եւ մանաւանդ դարավերջին ունեցաւ իր ինքնուրոյն եւ սեփական հոգեւոր

ֆնարերգութիւնը՝ «Գեղեցկապէս յարմարեալ ի խորհուրդ աւուրն եւ տօնին»։

Այս երգերի հեղինակները նոյն ինքն Ս. Սահակը, Ս. Մեսրոպը եւ նրանց ընտրեալ աշակերտներն էին ու նրանց մէջ յատկապէս մեծ ֆերթողահայրը՝ Մովսէս Խորենացին եւ Յովհան Մանդակունին։

Հայ հոգեւոր երգասացութեան մեղեդային կառոյցի խարիսխը համարում է այն տասը եղանակների համակարգը, որի վրայ հետագայ դարերում քարձրացել է հայ հոգեւոր երգը։ Այդ տասը եղանակների յօրինումը եւս վերագրուում է Ս. Սահակին եւ Ս. Մեսրոպին։ Ահա մատենագրական հաւաստումն այդ մասին.

«Նախ՝ Սուրբն Իսահակ եւ Սուրբն Մեսրոպ ասացին զութն եղանակաւոր ձայնս շարականաց եւ երկու ձայն ստեղիս»։

Մեր մատենագրութեան ոսկեդարից յետոյ մի նոր վերելք է եօթներորդ դարը։ Այս դարում են ստեղծագործել Կոմիտաս Աղցեցին, Սահակ Զորափորեցին, Ստեփանոս Սիւնեցին եւ Յովհան Օձնեցին։

Եօթերորդ դարը հայ մշակոյթի պատմութեան մէջ նշանաւորուում է ճարտարապետութեան բուռն վերելքով։ Հայաստանում վեր են խոյանում քաղմաքիւ կոթողներ, որոնց մէջ առանձնապէս կարեւոր են Ս. Հռիփսիմէ, Ս. Գայանէ, Զուարթնոց եւ Մաստարայի տաճարները։

Ճարտարապետութեան ծաղկ-

մանը զուգահեռ, նոր վերելք է ապրում նաև հոգեւոր ֆնարբերութիւնը՝ հայ միջնադարեան երգասացութիւնը, որի նշանաւոր ներկայացուցիչներին է Կոմիտաս Աղցեցի Կաթողիկոսը:

Կոմիտաս Աղցեցու կեանքի եւ գործունէութեան մասին տեղեկութիւններ է հաղորդում նոյն դարի պատմիչ Սեբէոսը: 615 թուականին քարձրանալով Հայրապետական Աթոռին՝ Կոմիտասը ձեռնամուխ է լինում Հայաստան աշխարհի եւ Հայ եկեղեցու քարեկոթման դժուարին գործին: Նրան յատկապէս հռչակ են բերում իր շինարարական ձեռնարկումները, որոնց համար էլ ստանում է «Շինող» մականունը: 618 թուականին Կոմիտաս Կաթողիկոսն աւարտում է Ս. Հռիփսիմէ տաճարի կառուցումը: Ահա Սեբէոսի վկայութիւնն այդ մասին. «Եւ եղեւ յամի ԻԸ-երորդի թագաւորութեան Ապրուէզ Խոսրովու ֆակեաց կաթողիկոսն Կոմիտաս զմատուռ սրբոյն Հռիփսիմեայ ի Վաղարշապատ ֆաղափ, զի կարի ցած եւ մթին էր շինուածն, որ շինեալ էր սրբոյն Սահակայ հայրապետի Հայոց կաթողիկոսի, սրբոյն Ներսէսի: Արդ, մինչդեռ ֆակէին գորմն մատրանն, երեւեցաւ յանկարծակի լուսաւոր եւ չֆնաղագիտ արքունական մարգարիտն, այսինքն՝ կուսական մարմին սրբոյ տիկնոջն Հռիփսիմէի...: Ո՛վ մարգարիտ, որ ո՛չ ծովածին, այլ՝ մարգարիտ, որ ծնեալ ի թագաւորական ազգէ եւ սնեալ ի գիրկս սրբութեան եւ նուիրեալ Աստուծոյ, որում ցանկացեալ էին տեսանել զֆեզ արդարֆ, եւ խանդակաթ էր ի սէր ֆո երանելին Կոմիտաս»(1): Ենթադրում է, որ այդ օրերին է ստեղծուել «Անձինք նուիրեալ» սֆանչելի քանաստեղծութիւնը, որն ամենայն հաւանականու-

թեամբ առաջին անգամ երգուել է տաճարի նաւակատեաց հանդիսութիւնը: «Անձինք»ի ստեղծմամբ հոգեւոր ֆնարբերութեան մէջ սկիզբ է դրուում քանաստեղծութեան նոր տեսակի: Այս շարականը պատմական իրադարձութիւնների շարադրանքն է՝ նուիրուած Հռիփսիմեանց կոյսերին:

«Անձինք նուիրեալ» շարականը, լինելով հայ հոգեւոր երգասացութեան առաջին երկարաշունչ քանաստեղծութիւնը, իր գեղեցկութեամբ եւ գեղարուեստական քարձարուեստ յօրինուածով մնաց իրրեւ մեր քաղաքարեան ֆնարբերութեան անգերազանցելի գոհարներից մէկը: Ահա Մ. Արեղեանի կարծիքը Կոմիտասի այդ ֆերթուածի մասին. «Կոմիտաս Կաթողիկոսի «Անձինք նուիրեալ» երկի մէջ մեր հոգեւոր երգը մեծ կատարելութեան է հասած իր ձեւով, ուստի պէտք է ընդունել, որ մեր եկեղեցական քանաստեղծութեան ծաղկման նախապատրաստական շրջան եղած պիտի լինէր եւ տէրունական տօների համար արդէն երգեր յօրինուած պիտի լինէին նախֆան Հռիփսիմեանց «Անձինք»ի նման մի մեծ ֆերթուածի երեւան գալը...»(2):

«Անձինք»ը իրականում մի գեղեցիկ պոէմ է՝ նուիրուած Հռիփսիմեանց կոյսերի նահատակութեանը: Կոմիտասը չի նկարագրում Հայաստանում ապաստանած ֆրիստոնեայ կոյսերի սոսկալի նահատակութիւնը: Բանաստեղծութիւնը գովք է մանուկ կոյսերի գեղեցկութեան եւ նրանց հոգեւոր արիւթեան՝ «ընդդէմ մահու»: Գրիգոր Նարեկացուց շուրջ երեք հարիւր տարի առաջ շարականագիր Հայրապետը գովերգում է կանացի գեղեցկութիւնը.

1) Պատմութիւն Սեբէոսի, Երեւան 1979, էջ 121:

2) Մ. Արեղեան, Հայոց Հին Գրականութեան Պատմութիւն, Գիրք առաջին: Երեւան, 1944, էջ 477:

Գեղեցկութիւնք մարմնաւոր
պայծառութեան ձերոյ

Յիմարեցոյց ըզբագաւորն, եւ
պակեան հեթանոսք.

Ի գեղ սփանչելի աստուա-
ծատուր կուսանացն

Տարփացեալ զըւարթունքն ընդ
մարդկան տօնեցին:

Աւելորդ չենք համարում այստեղ
մէջքերելու մի կարելորդ հանգամանք
եւս, որով աւելի է արժեւորուում
«Անձինք»ը իբրեւ դարաշրջան կազմող
ստեղծագործութիւն: Յայտնի է, որ
Լաւոդիկէի ժողովում՝ 360 թուականին,
յատուկ որոշում է ընդունուել, որի
համաձայն արգելուում էր չափածոյ
երգերի յօրինումը եկեղեցուց ներս:
Անկասկած Հայ եկեղեցին եւս սկզբնական
շրջանում ինչ-որ չափով ենթարկուել է
վերոյիշեալ որոշմանը: Այս առումով
եւս կոմիտասի չափածոյ եւ քաղմատուն
«Անձինք»ը նորութիւն էր հոգեւոր
փոփոխութեան մէջ:

Դեռատի կոյսերի գեղեցկութեան
համար են պայքարում աշխարհի
հզօրները: Ճակատամարտ է սկսուում
տկար կանանց եւ թագաւորի, զօրեղ եւ
մարտունակ տղամարդկանց միջեւ,
ապշեցուցիչ մի պայքար, որ զարմացնում
է ոչ միայն մարդկանց, այլ նաեւ
Աստծուն, որ խոնարհուում է ականատես
լինելու այդ անհաւասար կռուին:

Է զարմացումն եւ ի վեր քան
ըզհրաշս

Խորհրդոց եւ քանից
հրեշտակաց եւ մարդկան.

Քանզի էնն Աստուած
ամենագօր զօրութեամբն

Խոնարհեալ տեսանէր ըզհանդէս
կուսանացն:

Եւ այդ անհաւասար պայքարում
դեռատի կոյսերն են յաղթում.-

Թուլացան կորովիք հաստածիք
աղեղանց,

Եւ տկար կանայքն վառեցան
զինու.

Թագաւորն պերնացեալ
զօրութեամբ եւ փառօք

Ի մանուկ ի կուսէն պարտեալ
ամաչէր:

Հոփսիմէն եւ Հոփսիմեանք՝
երեսունեօք սրբակեաց կոյսերը, երկրային
փառքն ու սէրը արհամարհում են ի սէր
Քրիստոսի:

Կոմիտաս Աղցեցու «Անձինք»ը
իր բովանդակութեամբ, քերած
նորութիւններով երբեք դարագլուխ
կազմող ստեղծագործութիւն չէր
հանդիսանայ եթէ չունենար նոյնքան
կատարեալ լեզու եւ լեզուամտա-
ծողութիւն: Լաւագոյն գրական ստեղ-
ծագործութիւններն առանձնանում են
լեզուական միջոցների քաղմագնու-
թեամբ, նկունութեամբ եւ ներդաշնակու-
թեամբ, տուեալ լեզուի ազգային քառա-
պաշարի, արտայայտչական միջոցների
եւ փերականական ձեւերի ներքին անսպառ
հնարաւորութիւնների քացայտմամբ:
Այդպիսի փոքրած է նաեւ «Անձինք»ը,
որն աչքի է ընկնում պատկերաւորման
միջոցների հարուստ օգտագործմամբ,
քայց զարմանալի կերպով՝ ոչ մի
արհեստականութիւն, իմաստի մթագնում,
քառերի խնդում կամ անհարկի
կրկնութիւն: Այս շարականում օգտագոր-
ծուած են քաղում մակդիրներ, քայց
հետաքրքիր է, որ 36 տներում նրանք չեն
կրկնուում, նրանց գործածութիւնը
հիմնականում ետադաս է: Օրինակ՝
անձինք նուիրեալք, կուսանք իմաստունք,
քարքառք երկնաւորք, կանայք
պատուականք, ղեկավարք նարտարք,
անդաստանս հոգեւորս, շինուածք
երկնաւորք, արձանք լուսեղէնք:

Մակդիրներին շատերը բարդ բառեր են, իսկական բարդություններ՝ ողջակէզ բանաւորք, եղեմ աստուածատուն, մահաբերք անիծիցն, բեքեւաբեռն մարմնով: Այստեղ ցանկանում ենք նշել մի կարելուր հանգամանք եւս. Կոմիտաս Հայրապետի «Անձինք»-ում օգտագործուած են մակդիրներ, որոնց չենք հանդիպում Տրդ դարի հայ հոգեւոր երգասացութեան մէջ՝ ընկերք միամիտ, հաստաձիգ աղեղանց, դեկավարք նարտարք, բեքեւաբեռն մարմնով, սուտ պանունանք, արձանի լուսեղէնք, քաղաքէն բոնութեամբ, դիւապաշտ մոլորութեանց, անստերիւր հոգեւորական վարուք, կանայք վեհագիրք, մարք մանկունք:

Յայտնի է, որ շարականագիր Հայրապետի «Անձինք»-ի համար սկզբնաղբիւր է հանդիսացել Ագաթանգեղոսի պատմութիւնը: Ցաւօք, Սերէոսը, որ հանգամանօրէն խօսում է Ս. Հովսիսի մտանքի կառուցման մասին, լռում է «Անձինք»-ի ստեղծման վերաբերել: Միջնադարից, սակայն, մեզ են հասել վեց հեղինակային ցուցակներ, սկսած 13րդ դարից, որոնք Կոմիտաս Աղցեցուն են վերագրում Հովսիսիմեանց կանոնի «Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի» շարականը:

Ստորեւ մէջ ենք բերում այդ ցուցակների յղումները.

Սարգիս Երեց 4

«Հովսիսիմեանցն զԱնձինքն նուիրեալքն եւ զայլն Կոմիտաս Կաթողիկոսն ասաց...»

Գրիգոր Տաթեւացի

«Հովսիսիմեանցն Անձինքն եւ զհարցն՝ տէր Կոմիտասն...»:

Անանուն ցուցակ 8

«Տէր Կոմիտասն՝ Հովսիսիմեանց Անձինքն եւ զհարցն»:

Առաքել Սիւնեցի (ցուցակ 7)

«Յաղթող բանիւ երանելին՝ տէր Ստեփանոսըն Սիւնեցին, Պուետիկոսն

ցանկային՝ տէր Կոմիտասն հրաշալին»:

Ստեփանոս Զիւր Զուղայեցու ցուցակի 16.

«Հովսիսիմեանց զհարցն եւ զԱնձինքն Տէր Կոմիտաս սրբահոգին»:

Ըստ Յակոբ Ասեցու ցուցակի 16

«ԸզՀովսիսիմեանց զհարցն եւ զԱնձինքն Տէր Կոմիտաս սրբահոգին»:

Հարկ ենք համարում այստեղ խօսել «Անձինք»-ների մասին ընդհանրապէս: «Անձինք»-ը հայ հոգեւոր ֆնարերգութեան առաջին ընդարձակ բազմատուն բանաստեղծութիւնն է՝ բաղկացած 36 տներից եւ կազմուած մեսրոպեան այբուբենի յաջորդականութեամբ:

Հետագայում այբուբենի յաջորդականութեամբ գրուած 36 տներից բաղկացած բանաստեղծութիւնները, հոգեւոր թէ աշխարհիկ բովանդակութեամբ, կոչուեցին «Անձինք», օրինակ՝ Դավթակ Քերթողի Ջեւանշիրի Ողբը:

Հետաքրքիր է նաեւ, որ «Անձինք նուիրեալք» շարականից յետոյ նոր «Անձինք»-ներ ստեղծուում են շուրջ հինգ հարիւր տարի յետոյ միայն: 12րդ դարում Ներսէս Շնորհալի Հայրապետը, ում անուան հետ է կապուում հայ հոգեւոր երգասացութեան նոր եւ մեծագոյն վերելքի շրջանը, ի թիւս բազմաթիւ այլ հոգեւոր երգերի, յօրինել է նաեւ հինգ «Անձինք»-ներ, որոնք տեղ են գտել Դիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւններում եւ ունեն գրեթէ ամենօրեայ գործածութիւն:

Ահա Ներսէս Շնորհալու այդ «Անձինք»-ները.

«Առաւօտ Լուսոյ»,

«Աշխարհ ամենայն»,

«Այսօր Անճառ»,

«Աստուած անեղ»,

«Երգ վասն վեցօրեայ արարչութեան»:

Այս «Անձինք»-ները ստեղծուել

են ժամերգութեան տարբեր մասերում երգուելու համար եւ ունեն յօրինուածքի, կատարման կամ գործածութեան զանազան ձեւեր:

«Անձինք»ներ յօրինուել են նաեւ հետագայ դարերում: 13-15 դարերում յօրինուել են Յովհաննէս Երզնկացու՝ Լուսաւորչի «Անձինք»ը՝ «Այսօր զուարեացեալ ցնծայ», Գրիգոր Սկեւռացու՝ Յովհաննու Կարապետի «Անձինք»ը՝ «Արեգականն արդարութեան» եւ Շարակնոցի վերջին «Անձինք»ը՝ Կիրակոս Երզնկացու «Արեւելք գերարփին» Աստուածամօր Վերափոխման տօնին ձօնուած շարականը:

Այս «Անձինք»ով եզրափակուում է հայ հոգեւոր փնտրեցութեան այս տեսակի հետագայ զարգացումը:

Շարակնոցում, բացի վերոյիշեալ երեսունվեց տներից բաղկացած «Անձինք»ներից, կայ նաեւ «Գիւտ Խաչի» կանոնին մաս կազմող մի «Անձինք» եւս՝ «Ապաւինեցաք ի խաչ քո»: Շարակնոցում տեղ են գտել այս շարականի առաջին հինգ տները միայն, իսկ մնացած 5 տները հաւանաբար հանուել են իրրեւ պարականոն, քանի որ այն ամբողջութեամբ տեղ է գտել Սահակ ծայրագոյն վարդապետ Ամատունու 1911 թուականին Վաղարշապատում հրատարակուած «Հին եւ նոր պարականոն կամ անվաւեր շարականներ» արժէքաւոր աշխատութեան 134րդ էջում:

Ուշադրութեան արժանի են նաեւ Կանոնական Շարակնոցում տեղ գտած երկու «Անձինք»ներ եւս, որոնք ունեն իւրայատուկ կառուցուածք: Նրանցից առաջինը Անսկիզքն Բանն Աստուած» ԴԿ. որ Հոփսիսմեանց կանոնի Համբարձի շարականն է, որը բաղկացած է տասը տներից, սակայն բանաստեղծն այդ տասը տներում կարողացել է օգտագործել 36 տառերը հետեւեալ սկզբունքով. առաջին

տունն ունի երեք տառ, երկրորդից մինչեւ իններորդ տներ՝ չորսական, իսկ վերջին տասներորդ տառով սկսուող տունը՝ մէկ տառ:

Յաջորդ տասը տներից բաղկացած «Անձինք»ը, որն ունի միեւնոյն կառուցուածք, Ներսէս Շնորհալու Ղեւոնդեանց կանոնի «Մանկունք» շարականն է ԴԿ (վերջձայն). «Անճառելի Բանդ Աստուած, որ վասն մեր ելեր ի խաչ...»:

Ստորեւ ներկայացնում ենք վերոյիշեալ շարականները (12-15րդ) դարերի յաջորդաբար:

Առաւօտ Լուսոյ

Ներսէս Շնորհալու այս երգը («Անձինք»ը) նոյնպէս արտականոնական է, ինչպէս յաջորդ չորս «Անձինք»ները, այսինքն սրանք չեն մտնում շարականային կանոնի մաս կազմող ուր երգ միաւորների մէջ: «Առաւօտ լուսոյ» հոգեւոր երգի իւրաքանչիւր տուն երկու եռատող է՝ կազմուած երկու տառից: Այս երգն աչքի է ընկնում լեզուի պարզութեամբ, մատչելիութեամբ, միաժամանակ անկրկնելի գեղեցկութեամբ եւ յուզականութեամբ: «Առաւօտ լուսոյ»ն յօրինուած է հինգ վանկանի տողերով.

Առաւօտ լուսոյ

Արեգակն արդար,

Առ իս լոյս ծագեա:

Բրդխումն ի հօրէ,

Բրդխեա ի հոգւոյս

Բան քեզ ի հաճոյս:

Տօղ արեան քո, տէր,

Տօղեա ի հոգիս,

Ցրնծասցէ անձն իմ:

Իւծեալըս մեղօք,

Իիւծեալ աղաչեմ,

Իիւսել ինձ բարիս:

Աշխարհ ամենայն

Հայոց այրուքների 36 տառերի յաջորդականութեամբ ստեղծուած այս գեղեցիկ հոգեւոր երգը մաս է կազմում Դիշերային ժամերգութեան եւ երգուում է Սրբոց տօներին եւ Պահոց օրերին: Ինչպէս «Առաւօտ լուսոյ»-ն, «Աշխարհ ամենայն»-ը եւս կազմուած է եռատողերից՝ երկու տառերով եւ ունի տասներորդական տուն: Իւրաքանչիւր տան վերջում կրկնուում են «Տէր Ողորմեա»ներ: Զեռագիր եւ տպագիր ժամագրքերն ունեն հետեւեալ վերնագիրը. «Տեառն Ներսէսի Հայոց Կաթողիկոսի ողբերգութիւն անձին զղջացելոյ եւ բողոք իւրաքանչիւրոյ դիմի խոստովանաբար:» Հայրապետը բոլոր 108 տողերում օգտագործում է գեղեցիկ պատկերներ... Յանգը անապետեան միանգամ հինգվանկանի տաղաչափութիւնն է, որը հայ մատենագրութեան մէջ առաջին անգամ օգտագործել է Ներսէս Շնորհալին: «Աշխարհ Ամենայն»ը- գրուած է նոյն չափով:

Աշխարհ ամենայն.

Առ իս նայեցեալ.

Ախտակից լերուէ:

Բանամ ըզշրթունս,

Բարբառիմ լեզուաւս,

Բողոքեմ զանձնէս.

Տէր ողորմեա:

Սիրով ցանկութեան.

Սաստիկ բարկութեան.

Սիրտ իմ խոցեալ է:

Վիրօք յանցանաց.

Վըշտանայ հոգիս.

Վարանեալ շըրջիմ.

Տէր ողորմեա:

Երգի ամէն մէկ տող մարդկային մեղաւոր հոգու տառապանքն է, իր մեղքի ծանր զգացումը եւ ապաւինումը միայն Աստծուն:

- Այսօր անճառ

«Երգ Տեառն Ներսէսի Հայոց Կաթողիկոսի ասացեալ յաղագս Մեծի Ուրբաթու գիշերին Աւետարանացն»: Այսպէս է վերնագրել Ներսէս Շնորհալին «Այսօր անճառ» «Անձինք»ը, որը եւ խիստ կերպով պատշանցեցնում է պահին: Տրոհուած է վեցական տների եւ իւրաքանչիւր վեցեակ երգուում է իրրեւ առանձին երգ՝ նոյն օրը, չարչարանաց գիշերը ընթերցուող վեց Աւետարաններից առաջ: «Անձինք»ն ունի ԴԿ ձայնաեղանակ: Տաղաչափութիւնը միանգամ 4 վանկանի չափն է.

Այսօր անճառ լուսոյն ծագումն
Ի փրկութեան մեր կատարումըն
խոնարհի

Ի վերնատունն ի ստուերական
տօնից լըրումն:

Նախ քան զընթրիսըն խորհրդոյ
Սփածաւ դենջակ արկողն լուսոյ.
Եւ ջուր առեալ ծառայաբար
Զոտըս լուանայր զաշակերտացն:

Աստուած անեղ

Ըստ ժամագրքի ու Շարակնոցի, այս երգի վերնագիրն է՝ «Երգ Տեառն Ներսէսի, ասացեալ վասն առ ի Քրիստոս ննջեցելոց»: Այս երգը տրոհուած է չորս մասի՝ իննական տներով եւ պատշանցեցուած է իւրաքանչիւրը երկու ձայնեղանակի համար՝ համաձայն այն չորս Աւետարանների թուին, որոնք ընթերցուում են գիշերային ժամերգութեան ընթացքին: Այս երգի տաղաչափութիւնը եւս կազմում է 4 վանկանի տողեր.

Աստուած անեղ, անժամանակ,
Հայր անըսկիզբն եւ անքանակ,
Որդւոյ պատեառ ծննդեամբ
անճառ,
Հոգւոյն բղիժամբ անքննաբար.
Աղաչեմք ըզքեզ զըրթած,

Երկայնամիտ եւ ողորմած,
Ողորմեա քո ստեղծուածոյս
Յուսով ի քեզ ննջեցելոյս:

Մերով բնութեամբ, զոր
ըզգեցար
Ի փայտ խաչին բեւոեցար.
Լուծանելով զմեզ ի մեղաց
Ի նախահօրըն կայանաց.
Լոյծ եւ ըզսա ի յանցանաց
Վասըն քո սուրբ չարչարանաց.
Լի լապտերօք մոյծ յառագաստ
Ընդ իմաստուն սուրբ
կուսանացն:

Արարչական կամ Երգ
Եօթնօրեայ Արարչութեան

Այս երգը եւս տրոհուած է վեց
մասի՝ վեցական տներով, եւ երգուում է
երկուշաբթի օրուանից սկսած մինչեւ
Շաբաթ օրը: Իսկ կիրակի օրուայ համար
Ներսէս Շնորհալին յօրինել է
«Նորաստեղծեալ» գեղեցիկ երգը, որի
ծայրակապը կազմում է Ներսէս: Ըստ
էութեան երգի տողերում պատմուում է
արարչագործութիւնը՝ աշխարհի ստեղ-
ծումն ըստ Աստուածաշնչի:

Երգի տաղաչափութիւնը դարձեալ
4 առանել 4 վանկանի տողերն են.

Արարչական բանին հրաման
Ի յերկրորդումն աւուր
սկըզբան,

Ըզջուրսն ի շուրջըն բաժանեաց
Հաստատութեամբ պարու-
նակեաց,

Որով զաշխարհս հողեղինաց
Անջրպետեաց ի հերդինաց.

Ընդ նոսին, որդիք լուսոյ,
Տուք օրհնութիւն երբեակ
լուսոյն:

Այսօր զուարճեցալ

Այս «Անձինք»ը կոչուում է նաեւ

«Անձինք Լուսաւորչի», քանի որ այն
նուիրուած է Գրիգոր Լուսաւորչի սոսկալի
չարչարանքների ու խոր Վիրապ
նետուելու յիշատակին: Գրիգոր
Լուսաւորչի «Անձինք»ի հեղինակն է
ԼՅրդ դարի նշանաւոր գիտնական,
բանաստեղծ ու երաժիշտ Յովհաննէս
Երզնկացի վարդապետը: «Անձինք»ում
շարականագիրը լայնօրէն օգտագործել է
նաեւ ժողովրդական աւանդութիւններն
ու գրոյցները՝ Գրիգոր Լուսաւորչի կեանքի
ու գործունէութեան, նրա կրած սոսկալի
տանջանքների եւ ապա հայոց
քրիստոնէական դարձի գործում ունեցած
անգնահատելի ջանքերի մասին:

Առանց չափազանցութեան կարելի
է ասել, որ Յովհաննէս Երզնկացու այս
«Անձինք»ը իր գեղարուեստական ու
բանաստեղծական քարձր վարպետութեան
արժանիքներով առանձնանում է մեր
Շարակնոցի բոլոր շարականներից: Այն
նաեւ արժակ բանաստեղծութեան
սփանջելի նմուշ է.

Այսօր զուարճեցալ ցընծայ
եկեղեցի՝ դրախտ աստուածատունկ
ծաղկեալ. յորմէ տրւաւ մեզ տունկն
անմահութեան, տէր Գրիգորիօս, եւ
պըտղովն իւրով ելից ըզտիեզերս
ամենայն:

Երկնային լոյս ծագեալ եւ
յերկրի ցուցար, պայծառացեալ
փայլմամբ ի յարփույն կենաց, որով
հերքեցաւ խաւար թանձրամած
Հայաստանեայց ազգի, եւ տեսին
ըզլոյս շնորհաց Սուրբ Հոգւոյն:

Արեգականն արդարութեան

Յովհաննէս Մկրտչի Մենդեան
տօնին ձօնուած այս գեղեցիկ «Անձինք»ի
հեղինակը Գրիգոր Սկեւռացին է՝ ԼՅրդ
դարի մեր նշանաւոր շարականագիրներից
մէկը: Յովհաննէս Մկրտչի Մենդեան

պատմութիւնը շարականագրի հիմնական նիւթն է՝ երգուած քարձր վարպետութեամբ.

Արեգականն արդարութեան ծագման արուեստէն առաւել, նախընթաց նախապարհի որդւոյն Աստուծոյ տնօրէնութեան սուրբ Յովհաննէս, առ Քրիստոս քարեխօսեալ վասն անձանց մերոց:

«Արեւելք գերարփին» կամ «Անձինք Վերափոխման»

Այս չինաղ շարականը հեղինակել է Կիրակոս Երզնկացի, որը համարուում է մեր վերջին շարականագիր վարդապետը: Շարականի նիւթը նա վերցրել է Աստուածամօր ննջման պատմութիւնից:

Գեղարուեստական քարձր վարպետութեամբ շարականագիրն իրօք որ կերտել է Տիրամօր սմանչելի կերպարը: Յայտնի է, որ Աստուածամօր ննջման տօնը մեզանում տօնախմբուել է դեռեւս հինգերորդ դարում, եւ այդ տօնի շարականը՝ «Այսօր ժողովեալ սրբոցն ի միասին»ը, յօրինել է Մովսէս Խորենացին: «Արեւելք գերարփին» «Անձինք»ում կան տողեր, որոնք յիշեցնում են Մովսէս Խորենացու վերոյիշեալ շարականը: Ննջման կամ Վերափոխման պատմութիւնը գեղարուեստական քարձր վարպետութեամբ ներբողել է պատմահայր Մովսէս Խորենացին իրրեւ Վերափոխման տօնի պատմութիւն: Չորս ծաւալուն տներն մէջ շարականագիրը ներկայացնում է Ս. Կոյսի մասին եղած ննջման գեղեցիկ այս աւանդութիւնն ամբողջութեամբ, ինքնատիպ կերպով:

Կիրակոս Երզնկացու սմանչելի այս «Անձինք»ը Շարակնոցում դրուած է իրրեւ Վերափոխման երկրորդ օրուայ

կանոնի «Այսօր զաննառելի ծննդեան քո, Տէր».

Դ՛հ օրհնութեանը կից՝ որպէս քաղուածք. այն երգուում է նաեւ իրրեւ հետեւակ շարական: Այստեղ հեղինակը պատմում է արարչագործութեան մասին: «Անձինք»ը աչքի է ընկնում հարուստ քառապաշարով, աստուածաբանական եւ դաւանաբանական խորը ընդհանրացումներով, որն ապացոյց է հեղինակի աստուածաբանական խնդիրների անհերքելի գիտութեան:

Շարականը յօրինուել է յամբական 3-4 վանկանի չափով:

Արեւելք գեղարփին

Եւ օրարան լուսածին,

զանմայր ծննեալն առաջին

ծնար անհայր յերկրորդին.

Բարեխօսեա Միածինն Աստուածածին մայր Բանին:

«Անձինք»-ների լեզուական մանրակրկիտ ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ հինգերորդ դարի հոգեւոր երգասացութեան համեմատութեամբ Կոմիտաս Աղցեցու «Անձինք»ը բոլորովին նոր որակ է նաեւ իր լեզուական առանձնատկութիւններով: Ինչպէս այս «Անձինք»ում, այնպէս էլ հետագայ բոլոր «Անձինք»ներում կան քաղմաթիւ նորարարութիւններ: Ցանկանում եմ նշել նրանցից մի քանիսը միայն.

«Անձինք նուիրեալք». քեքեւաքեռն մարմնով, ծովածուփ կենցաղոյս, կանայք վեհագինք եւ այլն: «Փառաց ի փառս». այս ձեւը առաջին անգամ է հանդիպում մեր քնարերգութեան մէջ, այնուհետեւ հանդիպում ենք ներսէս Շնորհալու մօտ՝

«Փառաց ի փառս քարձրանան, Աջակողմեանքն վերանան» (երգ Հանգստեան):

Աստուած անեղ՝

«Ընդ աղանեաց օղապարից»...

«ըզսա աւուրն աներեկի լուսաւորեա լուսով փոյին»:

Անհնար է մէկ յօդուածի սահմաններում ներկայացնել «Անձինք»ների բերած բոլոր լեզուական նորութիւնները, սակայն ցանկանում եմ նշել, որ կազմուած է նաեւ վերոյիշեալ «Անձինք»ների համարաբարը:

Այսպիսով «Անձինք»ների ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ հինգերորդ դարի հայ հոգեւոր ֆնարերգութեան համեմատութեամբ եօթներորդ դարում սկզբնաւորուած մեր քանաստեղծութեան այս նոր տեսակն իր քառապաշարով ու նորակազմութիւններով, լեզուաոճական առանձնայատկութիւններով ու տաղաչափութեամբ նշանաւորում է մի նոր դարաշրջան՝ հարստացնելով մեր հոգեւոր քաղաքացիութիւնը:

«Անձինք»ը նաեւ մի սփանջելի ներքող է մասնաւորապէս Ս. Մեսրոպի հանճարով ստեղծուած մեր անմահ աշխարհին:

Օգտագործուած գրականութեան ցանկ

Ղ. Փարպեցի - «Հայոց պատմութիւն», Երեւան, 1982թ.:

Պատմութիւն Սերէոսի, Երեւան, 1979թ.:

Գ. Տաքեւացի - «Դիրք Հարցմանց», Կ. Պոլիս, 1729թ.:

Գ. Աւետիքեան - Բացատրութիւն շարականաց, էջ ԺԳ.:

Մ. Արեղեան, - «Հայ հին գրականութեան պատմութիւն», 1970, հատ. Գ.:

Գ. Յակոբեան - Շարականների ժանրը հայ միջնադարեան գրականութեան մէջ:

Խ. Պալեան - «Շարականագիտութիւն», (Դրակ. մէջ) Երեւան, 1980թ., «Կոմիտաս Աղցեցի» (ձեռագիր):

Չայնֆաղ շարական, Վաղարշապատ, 1888թ.:

ՄԱՐԻ ՍԱՆԹՈՒՐՋԵԱՆ

ԸՄՔԵՐԱՆԻՉ ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ

Արաք նշանաւոր բժիշկ Ապու՝ կը նկատուէր իր ժամանակի լաւագոյն գիտուններէն եւ իմաստուններէն մէկը:

Օր մը, Երեկոյթի միջոցին՝ գինք նեղ դրութեան մէջ թողելու դիտումով տարականոն հարցումներ ուղղուեցան իրեն, բայց ասիկա նախընտրեց լռել քան թէ պատասխանէ:

- Ուրեմն, ձեր լռութեամբ կը հաստատէք, որ չէք գիտեր:

- Շիտակ է, չեմ գիտեր, շեշտեց իմաստունը:

- Ի՞նչպէս կ'ըլլայ սակայն, որ խալիֆան այսքան սուղ կը վճարէ ձեր գիտութեան համար, նկատել տուաւ ուրիշ մը:

- Ատոր պատճառը շատ պարզ է: Խալիֆան կը վարձատրէ գիւ համաձայն իմ գիտցածներուս, եթէ պատահէր, որ ինծի վճարէր այն բոլոր բաներուն մասին, որոնց անգէտ եմ, այն ժամանակ՝ ամբողջ աշխարհին հարստութիւնը ինծի տալէն ետք, դեռ պարտական կը մնար:

«Մանրավէպեր»

Վարդան Ա. Թինյ. Տիպկեան